Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.150

Institutional Changes in the Political System of the Republic of Armenia and Modern Challenges

Lusine Soghomonyan
lusine.soghomonyan@ysu.am
Yerevan State University, PhD Student in Political Theory

Keywords: Political system of the Republic of Armenia, institutional changes, state institution, democracy, strategy,Constitution of the Republic of Armenia, security.

After gaining independence in 1991, the Republic of Armenia embarked on a series of institutional changes in its system of governance. This article analyzes the reforms that have been implemented and the paths they have followed. These reforms have unfolded in the areas of public administration, constitutional reform, anti-corruption efforts, foreign and domestic policy development, and the need for more effective tools in the social, security, economic, cultural, and educational sectors. In essence, these reforms have achieved partial success while simultaneously requiring ongoing reconsideration and revision.

ՀՀ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ փոփոխություններն ու ժամանակակից մարտահրավերները

Լուսինե Սողոմոնյան
ԵՊՀ քաղաքական գիտության տեսության բաժնի ասպիրանտ

Հիմնաբառեր՝ ՀՀ քաղաքական համակարգ, ինստիտուցիոնալ փոփոխություններ, պետական ինստիտուտ, ժողովրդավարություն, ռազմավարություն, ՀՀ Սահմանադրություն, անվտանգություն:

Հայաստանի Հանրապետությունը 1991 թ. անկախացումից [ՀՀ անկախության հռչակագիր, սեպտեմբերի 21] հետո կառավարման համակարգում փորձել է ներդնել մի շարք ինստիտուցիոնալ փոփոխություններ: Սույն հոդվածում վերլուծելու, քննարկելու և ուսումնասիրելու ենք, թե

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 150-159.

Received: 13.09.2025
Revised: 12.10.2025
Accepted: 25.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

ինչպիսի բարեփոխումներ են եղել, և ինչ ճանապարհով են դրանք անցել: Այն ընթացել է հանրային կառավարման, սահմանադրական բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի, արտաքին ու ներքին քաղաքականությունների մշակման, սոցիալական, անվտանգության, տնտեսական, մշակութային, կրթական ու այլ ոլորտներում ավելի արդյունավետ գործիքակազմի ներդրման անհրաժեշտությամբ:

Институциональные изменения политической системы Республики Армения и современные вызовы

Лусине Согомонян
Ереванский государственный университет, аспирант по теории политической науки,

Ключевые слова: Политическая система Республики Армения,
институциональные изменения,
государственный институт, демократия,
стратегия, Конституция Республики Армения, безопасность.

После обретения независимости в 1991 году Республика Армения предприняла попытки внедрить ряд институциональных изменений в систему государственного управления. В данной статье анализируются, обсуждаются и рассматриваются виды проведённых реформ и пути их реализации. Эти реформы осуществлялись в рамках публичного управления, конституционных преобразований, борьбы с коррупцией, разработки внешней и внутренней политики, а также в целях внедрения более эффективных инструментов в социальной сфере, сфере безопасности, а также в экономической, культурной, образовательной и других областях. По своей сути данные реформы были как успешными, так и одновременно требующими пересмотра и доработки.

* * *

Ներածություն: Հոդվածում քննվող ՀՀ ինստիտուցիոնալ փոփոխությունները, ըստ էության, եղել են և՛ հաջողված, և թե՛ կրկնակի վերանայման անհրաժեշտությամբ: Այդ փոփոխությունները մեծապես կախված և պայմանավորված են եղել երկրում իրականացվող ներքին՝ մշակութային-արժեքաբանական ու արտաքին՝ միջազգային հարթակում տեղի ունեցող մի շարք իրադարձություններով: Այս համատեքստում հատկանշական է նշել նաև համաշխարհայնացման գործընթացների մասին: Մշակութային գործոնի տեսանկյունից այս գործընթացը մեծագույն մարտահրավեր է այն երկրների համար, որոնք պատրաստ չեն կամ չեն հավակնում որոշակի մաս կազմել այս գործընթացի: Ըստ էության, համաշխարհայնացման գործընթացը հասկանալու համար առաջին հերթին պետք է հասկանալ վերջինիս բուն նշանակությունը:

Համաշխարհայնացման գործընթացների ազդեցությունը ՀՀ քաղաքական համակարգի զարգացումների համատեքստում: Համաշխարհայնացման գործընթացը մասնագիտական գրականության մեջ նկարագրվում է տարբեր կերպ, սակայն վերջինիս բուն իմաստը մշակույթների միավորման, ազատ, համաշխարհային առևտրի, գիտատեխնոլոգիական առաջընթացի մասին է: «Գլոբալ են համարվում այն հիմնախնդիրները, որոնք. ա) առնչվում են

պետությունների ու ժողովուրդների, ինչպես նաև մարդկանց կենսական շահերին, ժամանակակից քաղաքակրթության զարգացման օբյեկտիվ գործոններն են: Հիմնական կատեգորիան «գլոբալ լուծումն» է, որը մեկնաբանվում է որպես համաձայնեցված, համընդգրկուն ու միաժամանակյա փորձեր՝ լուծելու հնարավորինս շատ համամարդկային հիմնախնդիրներ կամ գոնե ուրվագծելու դրանց ուղիներն ու ռազմավարություն՝ գլոբալացման գործընթացը դիտարկելով որպես քաղաքակրթությունների երկխոսության հնարավոր ու ցանկալի արդյունք: Այս առումով գլոբալիստիկայի հիմնական խնդիրներից մեկը քաղաքակրթությունների երկխոսության նոր հայեցակարգի մշակումն է» [Քաղաքագիտություն, 2004, 78-79]: Ներկայիս համաշխարհային զարգացումներն առավել հավանական են դարձնում բազմաբևեռ աշխարհի ձևավորմանը, ինչը հակադրվում է համաշխարհայացման որոշակի սկզբունքներին: Ուստի պետք է ավելի ճկուն մոտեցումներ ցուցաբերել ոչ միայն արտաքին քաղաքականության խնդիրներին, այլև ներքին, հատկապես քաղաքական կյանքի ինստիտուցիոնալ փոփոխություններին, որոնք, ըստ էության, կախված են նաև միջազգային փոփոխություններից: «Հայաստանի պետական քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր «Անկախության մասին հռչակագրի» սկզբունքներին, ուստի ՀՀ խորհրդարանը ստիպված էր այնտեղ անընդհատ կատարել փոփոխություններ ու շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը 1990 թ. դեկտեմբերին ընդունեց «Հայաստանի անկախության մասին» առաջին սահմանադրական օրենքը, որի համաձայն՝ մինչև նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր սահմանադրական այն դրույթների գործողությունը, որը հակասում էր Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին» [Մինասյան Է., 2014, 138]:

Առհասարակ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտությունը բխում է հասարակության զարգացման առաջընթացի, քաղաքական համակարգի բարելավման ու կայունության, միջազգային հարաբերություններում դիվանագիտական կապերի հաստատման և մի շարք այլ գործոնների կարևորությունից: Այս փոփոխությունները միտված են նաև պետական ինստիտուտներն ավելի ճկուն ու դիմադրող դարձնելուն, քանի որ վերջիններս պետք է հստակ գործիքակազմ, ռազմավարություն ու մոտեցումներ ունենան՝ համաշխարհային զարգացման պայմաններում բավարարելու հասարակության շրջանում առաջացած պահանջներն ու կարիքները, դիմակայելու նոր մարտահրավերների ու փորձելու չեզոքացնել հնարավոր սպառնալիքները: Ինստիտուցիոնալ փոփոխությունները չափազանց կարևոր են նաև ժողովրդավարացման, քաղաքական համակարգի կայունության ու արդյունավետ աշխատող պետական ինստիտուտների տեսանկյունից: Ինչպես նշվեց, դրանք անհրաժեշտ են ամենատարբեր ոլորտներում փոփոխություններ իրականացնելու համար. իրավական համակարգում կատարված փոփոխությունները նպատակաուղղված էին անկախ, թափանցիկ դատական համակարգ ստեղծելուն ու իրավունքի գերակայությունը երաշխավորելուն, քանի որ հայտնի է, որ առանց արդարադատության ժողովրդավարությունը վերածվում է ձևականության: Քաղաքական պատասխանատվություն, հաշվետվողականություն.

սա ստեղծվում է իշխանության շրջանում պատասխանատվության ու հաշվետվողականության մակարդակի բարձրացման նպատակով՝ ներդնելով այնպիսի մեխանիզմներ, որոնք հանրային վստահության բարձրացմանն ուղղված արդյունավետ գործունեության կարող են ապահովել: Քաղաքացիական մասնակցության խթանում. սա սովորաբար ուղղված է լինում քաղաքացիական հասարակության գիտակցության բարձրացման, անկախ ու անխոչընդոտ մեդիադաշտի, լրատվության ազատ գործունեությանը, երբ քաղաքացիների ակտիվ մասնակցությունն ապահովված կլինի քաղաքական գործընթացներում վերջինիս նկատմամբ վերահսկողության սահմանման պահանջով: «Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն ձեռք բերեց միջազգային լայն ճանաչում, այլև կայուն, հուսալի ու կանխատեսելի գործընկերոջ համարում ստացավ: ՀՀ-ն անդամակցեց Եվրախորհրդին, կանխորոշեց երկրի զարգացման ուղին ու անշրջելի դարձրեց ժողովրդավարական զարգացումները: Հայաստանի Հանրապետությունը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության մի շարք հանձնաժողովների ու կոմիտեների անդամ: Ավելացան Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրների թիվը՝ դառնալով 160: Աշխարհի ավելի քան չորս տասնյակ երկրներում գործում են մեր երկրի դեսպանությունները, ներկայացուցչություններն ու հյուպատոսությունները…» [Minasyan E., 2014, 547]:

Հետխորհրդային շրջանում ՀՀ քաղաքական ու պետական ինստիտուտների ձևավորումը: 1991 թվականից հետո ՀՀ քաղաքական համակարգի առաջին խոշորագույն ինստիտուցիոնալ փոփոխությունը հետխորհրդային ժամանակաշրջանում կարող ենք համարել ՀՀ երրորդ հանրապետության անկախության ու նոր պետականության հռչակումը:

«1. Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունն ունի իր դրոշը, զինանշանն ու հիմնը:

2. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները…» [ՀՀ անկախության հռչակագիր, 1991, սեպտեմբերի 21]: Մասնագիտական գրականության մեջ կան անվտանգության հասկացության հետևյալ մեկնաբանությունները. անվտանգության օբյեկտի վիճակը, կամ երբ նրա համար չկա սպառնալիք, մի վիճակ, երբ անձն ու հասարակությունը բավարար չափով տնտեսական ու ռազմական հզորություն ունեն ինչպես այլ երկրների, այնպես էլ սեփական հասարակարգում ծագող սպառնալիքներին դիմակայելու համար: Արտաքին սպառնալիքից ազատ լինելու իրական կարողություն, մի վիճակ, երբ միջազգային հարաբերությունները բացառում են ազատության ու խաղաղության խախտումը կամ ժողովուրդների անվտանգության դեմ ուղղված սպառնալիքի ստեղծումը: …Անվտանգություն ասելով՝ ընկալվում է ներքին ու արտաքին սպառնալիքներից ու վտանգներից անձի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակը…: Որոշ հեղինակներ կարծում են, որ անվտանգության այնպիսի բնութագրումը առավել լիովին է արտացոլում սոցիալ-քաղաքական բնույթը, բնության ու հասարակության փոխադարձ կապը՝ հաշվի առնելով անձնական, հասարակական ու պետական անվտանգության դիալեկտիկական միասնությունը, զարգացող քաղաքականության ու գլոբալացման մյուս գործընթացները» [Քոչարյան Տ., 2013, 41]:

Institutional Changes in the Political System of the Republic of Armenia and Modern Challenges

ՀՀ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ փոփոխություններն ու ժամանակակից մարտահրավերները

Հաջորդ կարևորագույն համակարգային փոփոխությունը կարելի է համարել 1995 թ. նորանկախ Հայաստանի հռչակումից հետո ՀՀ առաջին Սահմանադրությունը [ՀՀ Սահմանադրություն (13.07.1995)]: Առհասարակ սահմանադրության ընդունումը պետության համար ունի հիմնարար նշանակություն, քանի որ այն վերջինիս իրավական ու քաղաքական հիմքն է, մայր օրենքը: Այնուհետև պետության անվտանգության մարմինների ստեղծման հարցն էր, որ հույժ կարևոր էր վերաձևավորվող պետության համար: Պետական ինստիտուտների ձևավորումը ենթադրում էր ստեղծել նաև ամուր ու կայացած իրավապահ համակարգ: Այս համատեքստում հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ում ոստիկանությունն անվանվում էր միլիցիա: Նաև նշենք, որ դեռևս «1918 թ. Հայաստանի առաջին հանրապետությունում ստեղծված էր Ներքին գործերի նախարարություն, որն իրականացնում էր ՀՀ տեղական կառավարման մարմինների ղեկավարումը, հասարակական կարգի պահպանման գործառույթները: Ներքին գործերի նախարարության կազմում 1918-1920 թթ. քրեական հետախուզության առանձին ստորաբաժանում չի գործել» [ՀՀ ոստիկանություն]: Այստեղ հարկ է նշել ՆԳՆ ձևավորման մասին [Ներքին գործերի նախարարություն], որը վերակազմավորվելով ներառեց Միգրացիայի և քաղաքացիական ծառայությունը, Արտակարգ իրավիճակների նախարությունն ու ՀՀ ոստիկանությունը: Հարկ է նշել նաև, որ ՀՀ-ում կային 17 նախարարություններ, որոնք վերամիավորվելով ու բարեփոխվելով դարձան 12-ը [Հայաստանի Հանրապետության Կառավարություն]:

Խոշորագույն փոփոխություն էր 2015 թ. նախագահական կառավարման ձևից անցում կատարելը խորհրդարանական ձևին, ինչը լիովին փոխել է թե՛ կառավարման ոլորտի գործիքակազմի կիրառությունը և թե՛ ընտրական գործընթացներում մեծամասնական ընտրական ձևից անցում կատարելը համամասնականի [Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխություններ]:

Համակարգային փոփոխություններն արտահայտվում են նաև կառավարման համակարգերի բարեփոխման շրջանակում: Այս փոփոխությունները բարենպաստ հանգամանք կարող են հանդիսանալ երկրի օրենսդրության, անվտանգության լրջագույն խնդիրների, դատական համակարգի, կոռուպցիայի կանխարգելման, սոցիալական ծառայությունների, գործարար միջավայրի բարելավման ու դիմակայունության բարձրացման տեսանկյունից:

Ինչպես արդեն նշեցինք, 1991 թ. նորանկախ Հայաստանի համար մեծ իրադարձություն էր Սահմանադրության ընդունումը: Սակայն այս ամենին զուգահեռ պետք է նշել նաև վերջինիս ընդունումից հետո կատարված փոփոխությունների, դրա հաճախականության, բովանդակության հարցերի մասին: Ըստ էության, Սահմանադրությունների ստեղծումն ուղղված է հասարակական կարգի բարելավման, օրինականության, թափանցիկության ամրապնդմանն ու պահպանմանը: Այլ հարց է, թե վերջինիս հռչակումից հետո ինչ հաճախականությամբ ու շարժունակությամբ է այն փոփոխվում: Փոփոխությունների հաճախականությունը պայմանավորում է հասարակական կարգի պահպանման, օրինականության կրկնակի ընդգծման, մարդու իրավունքների շեշտակի ամրագրման և այլ բացթողումների պահանջը [Մինասյան Է., 245]:

Սահմանադրական փոփոխությունները առնչվում էին ոչ միայն ներքին, այլև միջազգային մի շարք հարցերի։ Յուրաքանչյուր պետություն իր դիմակայությունը բարձրացնելու համար դիմում է մի շարք ինստիտուցիոնալ փոփոխությունների։ Ինչպես ներքին, այլև արտաքին մարտահրավերները հաղթահարելու, ընդհուպ մինչև չեզոքացնելու համար են ենթադրվում նաև սահմանադրական փոփոխությունները։ Այն հնարավորություն է տալիս պետությանը, ըստ անհրաժեշտության, փոփոխություն կատարելու կառավարման համակարգում։ Նախքան այդ գործընթացը նախաձեռնելը պետությունները պետք է իրականացնեն խորը և համապարփակ ուսումնասիրություններ, հիմնվեն հետազոտական կենտրոնների եզրակացությունների, մասնագիտական հարուստ փորձ ունեցող գիտնականների կարծիքների, ինչպես նաև աշխարհում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների բազմակողմանի վերլուծության վրա։ Միայն այսպիսի համակողմանի գնահատումն ու համապատասխան քաղաքական համաձայնության առկայությունը կարող են հիմք հանդիսանալ նման փոփոխությունների իրականացման համար։ Կարևոր է նշել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ընդունման մասին, որը առաջին անգամ ընդունվել է 2007 թ. [Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, 25.02.2007], որը փոփոխությունների ենթարկվեց 2020 թ. հուլիսին [Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր ռազմավարություն (06.2020)]։

Ինստիտուցիոնալ փոփոխությունները մեծ տեղ են զբաղեցնում նաև հասարակության շրջանում ընկալումների, արժեհամակարգի ու հոգևոր-մշակութային տեսանկյունից։ Մինչ օրս էլ այդ փոփոխություններն արվում են դեպի դրական տեղաշարժի ու հասարակության կյանքի բարելավման ուղղությամբ, սակայն հանդիպող խնդիրներն ու խոչընդոտներն այնքան շատ են լինում, որ հաճախ վերջիններս նախանշված նպատակին չեն էլ ծառայում։ Սա բավականին խորքային խնդիր է, որն ունի բազմակողմանի վերլուծության անհրաժեշտություն։ Առհասարակ որոշակի երկրի օրինակով որևէ երկրում փոփոխություն կատարելը ևս լի է մեծ վտանգներով։ Այս գործընթացը խորը և համապարփակ ուսումնասիրություն է պահանջում, քանի որ դա այնպիսի գործընթաց է, որը պարզապես կրկնօրինակելը կամ ներդնելը սխալ է։ Սա քաղաքական էլիտաների կողմից թույլատրվող խոշորագույն սխալն է։ Դրա կարևորագույն նախապայմանը միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարությունն է, ուղեղային կենտրոնների մեծածավալ աշխատանքն ու ճգնաժամային կառավարմանն ուղղված հստակ գործիքակազմի առկայությունը։ Կարծում ենք, որ սրանք այն հիմնական կետերն են, ըստ որի՝ կարելի է ցանկացած իրավիճակում ունենալ այլընտրանք, որը կօգնի լուծել որոշակի խնդիրներ։ Այս պարագայում առաջանում է ճգնաժամային կառավարման անհրաժեշտություն։ Ինստիտուցիոնալ փոփոխությունների տեսանկյունից հետխորհրդային ժամանակահատվածում կարևոր դերակատարում ունեցավ նաև տեխնոլոգիական առաջընթացը, որը հնարավորություն տվեց ստեղծելու բազմաբնույթ թվային հարթակներ, ապահովելու մեծածավալ տվյալների անվտանգ պահպանումը, հանրային կառավարման համակարգերի զգալի մասը տեղափոխելու թվային միջավայր, իսկ պետական կառույցներում՝ ակտիվորեն ներդնելու ավտոմատացված կառավարման ու ծառայությունների մատուցման գործընթացներ։ Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը արդյունավետ էր նաև հանրային գործընթացներում քաղաքացիների մասնակցայնության բարձրացման տեսանկյունից, քանի որ բաց տվյալներից օգտվելով՝ ավելի հեշտ է դարձնում մասնակցելու քաղաքական որոշակի

գործընթացների, ներգրավվելու քաղաքական-հանրային տարատեսակ քննարկումների, իրազեկվելու տարբեր գործընթացներից: Այն կարևոր է նաև հաշվետվողականության բարձրացման տեսանկյունից, քանի որ բազում թվային հարթակներ բաց տեղեկատվությամբ հրապարակում են գնումների, ֆինանսական գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն, ինչը կարող է նպաստել կոռուպցիայի նվազեցման կամ չեզոքացման երևույթները:

ՀՀ-ում գերատեսչությունների փոփոխությունները, ինչպես արդեն վերը նշվեց, միավորումներն ու վերամիավորումները ևս մեծ ազդեցություն են ունեցել պետական կառավարման համակարգի գործունեության կազմակերպման տեսանկյունից: ՀՀ-ում գերատեսչությունների վերակազմավորումն ընդգրկում է մի շարք պատճառներ՝ լավարկման գործընթաց, կառավարման արդյունավետության բարձրացում, որակի բարելավում, ռեսուրսների խնայողություն:

Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել ժամանակակից մարտահրավերների հանգամանքը, քանի որ դրանք անխուսափելի են պետությունների կյանքում: Սրանք և՛ մարդածին բնույթի են, և՛ բնածին: Սակայն երկու դեպքում էլ առաջանում է անհրաժեշտություն՝ ունենալու դիմագրավելու, շուտ դիրքավորվելու կարողություն:

Հետաքրքրական է 1991 թվականից հետո ՀՀ-ում կուսակցությունների ձևավորման և զարգացման ուղին: Նշենք, որ ՀՀ-ն բազմակուսակցական է, ինչը և՛ մեծ հնարավորություններ է պարունակում, և՛ մարտահրավերներ: Կուսակցությունների կազմավորման կտրուկ աճը լի է մի շարք մարտահրավերներով: Այն հանրության կողմից կարող է առաջացնել անվստահության ալիք, ինչը կարող է հանգեցնել ընտրական գործընթացներում պասիվ մասնակցայնության, քաղաքական տարբեր գործընթացներում հետաքրքրվածության ցածր մակարդակի ու անտարբերության: Սա մեծագույն մարտահրավեր է ընտրական գործընթացների կայացման ու ձևավորման տեսանկյունից: Հարկ է նկատել, որ կուսակցությունների գրանցման, հանրայնացման, իրազեկման հարթակը «Ազդարարն» է [Ազդարարման միասնական հարթակ]:

Քաղաքական դերակատարների ու քաղաքացիական հասարակության կայացման հիմնախնդիրները ՀՀ-ում: «Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, նոր արժեքներ կրողների ու արտացոլողների և իշխանության հաստատությունների միջև քաղաքական փոխազդեցությունների մի ընդարձակ ու բարդ խճանկար է: Նրանք գործում են ըստ այն դերերի ու գործառույթների, որոնք թելադրում են հայոց մշակութաքաղաքակրթական արժեքային համակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, հանրային ու ազգային շահերը և այլն: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացմանը բնորոշ են մի շարք առանձնահատկություններ:

Առաջին՝ նրա մասնակիցների միջև նպատակների ու քաղաքական գործողությունների քննարկումների անբավարարությունը:

Երկրորդ՝ քաղաքացիական վերահսկողության համակարգի անբավարար զարգացածությունը, որի պատճառը քաղաքացիական հասարակության գերազանցապես ձևական հաստատութենական ու ոչ գործառութային կայացումն է:

Երրորդ՝ հաստատութենական կարգի ու քաղաքական դերերի որոշակի չափով համատեղվածությունն ու եզրահանված փոխակերպումը: Քաղաքական կյանքի մասնակիցների բազմազանությունը թվացյալ է, քանի որ իրական դերն ու քաղաքական գործառույթները բավական սահմանափակ են: Որպես հաստատում նշենք, որ քաղաքական կուսակցությունները, որոնց թիվը յոթանասունից ավելի է, իրենց հնարավորություններով պայմանականորեն են արտահայտում քաղաքացիական հասարակության շահերը…:

Չորրորդ՝ քաղաքական արդիականացման մասնակիցների շրջանում առկա «սպասումների հիասթափությունը», որը ժողովրդավարների «առաջին սերնդի» կատարած վաուչերային մասնավորեցմանը հաջորդած աղքատության, կոռուպցիայի դրսևորումների ու արդարության պակասի, նաև հաղորդակցության համակարգի ցանցային ձեռնածությունների հետևանք է:

Հինգերորդ՝ քաղաքական արդիականացման հիմքում դրված ակտիվ քաղաքական ոճը՝ կազմված հասարակությանը պարտադրված նորամուծություններից: Դրանով քաղաքականության սուբյեկտների վարքը դառնում է ավելի կանխատեսելի:

Վեցերորդ՝ քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, օրինականություն) ճգնաժամների հաղթահարման ձգձգում, ինչի հետևանքով հակընտրանին հանդես է գալիս որպես ոչ թե քաղաքական ընդդիմախոս, այլ հակամարտային շարժում…» [Մարգարյան Մ., քաղաքական բլոգ]:

Այս համատեքստում անմասն չի կարող մնալ նորագույն տեխնոլոգիաների ազդեցությունը՝ որպես կյանքի բոլոր ոլորտներում մուտք գործած անհերքելի փաստ, որը հիմնովին կերպափոխել է մի շարք գործառույթներ, որոնք ավանդականից վերաձևավորվել են ավելի ժամանակակից, նոր ու թվային միջավայրի: Արդի տեղեկատվական-հաղորդակցային ենթակառուցվածքների զարգացման տեմպերն այն ուժգնությամբ են ներխուժել իրականություն, որ անհնար է դրանց չհարմարվելը, նաև առաջնահերթություն է առաջանում ճիշտ դիրքավորվելու: Սա կյանքի բոլոր ոլորտներում է իր տարածումը գտել: «Քաղաքական դաշտի փոխակերպման համար մեծ դերակատարություն ունեցան տեղեկատվական քաղաքական շուկայում էլեկտրոնային լրատվամիջոցների, երկխոսության միջոցով քաղաքական կոմունիկացիաների հանդես գալը, տեղեկատվության փոխանցման հանդես գալը. տեղեկատվության կտրուկ արագացումը…: …Տեղեկատվական ու հաղորդակցման նորագույն միջոցներն ակտիվորեն ներգրավվելով քաղաքականության մեջ՝ ոչ միայն որակապես ձևափոխեցին, այլ նաև հիմնավորապես ջարդեցին շատ պատկերացումներ, կարծրատիպեր, անհատների ու խմբերի, քաղաքական ինստիտուտների ու կառուցվածքների միջև փոխհարաբերությունների մոդելներ և այլն» [Քաղաքագիտություն, 2004, 182-183]: Պետությունը ևս՝ որպես հասարակական կյանքի կազմակերպման միջոց, ենթարկվել է այս փոփոխություններին:

Եզրակացություն: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել 1991 թ. ՀՀ անկախացումից հետո տեղի ունեցած ինստիտուցիոնալ խոշորագույն փոփոխություններին: Հարկ է նշել, որ այս գործընթացներն ուղեկցվել են մի շարք մարտահրավերներով ու դժվարություններով:

Institutional Changes in the Political System of the Republic of Armenia and Modern Challenges

ՀՀ քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ փոփոխություններն ու ժամանակակից մարտահրավերները

Ինստիտուցիոնալ բարեփոխումներն անհրաժեշտ են քաղաքական համակարգում առողջ, կայուն ու զարգացող միջավայրի ստեղծման ու ապահովման համար: Այս փոփոխությունները պայմանավորում են նաև ժամանակակից մարտահրավերները, աշխարհաքաղաքական փոփոխությունները:

Այսպիսով՝ Հայաստանի երրորդ հանրապետության քաղաքական համակարգն անցել է մի շարք ինստիտուցիոնալ բարեփոխումների միջով [Մանուկյան Ա., 2011, 42-50]: Անկախության հռչակումից հետո ամենատարբեր ոլորտներում կատարված բարեփոխումները չեն կարողացել ծառայել և իրենց նպաստը բերել ՀՀ կայուն, զարգացող ապագայի համար: Ինչպես հայտնի է, ՀՀ-ի համար շարունակում են մեծագույն մարտահրավեր մնալ դատաիրավական համակարգում անկախությանը, ազատությանն ու թափանցիկությանն առնչվող մի շարք հարցեր, կոռուպցիայի դեմ պայքարում ևս կան խոշորագույն խնդիրներ կան, որոնք, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում մեծագույն խոչընդոտ են ժողովրդավարության ամրապնդման տեսանկյունից: Կարևոր են կուսակցությունների օրենքներին առնչվող փոփոխությունները, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել վերջիններիս կազմավորման ու ակտիվ ներգրավվածության տեսանկյունից մի շարք ընտրական գործընթացներում: Հանրային վստահության տեսանկյունից ևս կան մեծ մարտահրավերներ, ինչը սերտորեն կապվում է իշխանություն-ընդդիմություն արդյունավետ երկխոսության բացակայության հետ: Տեխնոլոգիական առաջընթացը ևս ողջ մարդկությանը կանգնեցրել է գործիքակազմի փոփոխության լրջագույն պահանջի առջև: ՀՀ-ում տեղի ունեցող ինստիտուցիոնալ փոփոխությունները պետք է հետամուտ լինեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում շարունակաբար ներդնելու արագ ու արդյունավետ մեթոդներ: Այս փոփոխությունները պետք է համադրվեն թե՛ ներքաղաքական և թե՛ միջազգային շրջանակներում՝ իրենց գործունեության արդյունավետությանն ու օգտաշատության բարձրացման նպատակով:

References

1. HH ankaxut'yan hrchakagir, 1991, septemberi 21, https://www.gov.am/am/independence 24.05.2025.
2. Qaxaqagitut'yun. Hanragit. bararan.-Yer.: Njar, 2004.
3. **Minasyan E.,** Hayastani Errord Hanrapetutyan patmutyun, EPH, YER., 2014.
4. **Qocharyan T.,** Hayastani Hanrapetutyan azgayin anvtangutyan himunqneri veraberyal dasyntaci usumnakan dzernark.-Yer., 2013.
5. HH Sahmanadrut'yun (13.07.1995), https://www.arlis.am/documentview.aspx?docID=1, 21.05.2025.
6. HH Vostikanut'yun, ampop teghekutyunner, elektronayin hratarakutyun https://shorturl.at/MKHsM 20.01.2025.

7. Nerqin gortseri naxararutyuny steghcvel e 2022 tvakani dektemberi 30-in` orenqi uzhov. https://shorturl.at/Sc15F 22.05.2025:
8. Hayastani Hanrapetut'yan karavarut'yun. karucvatq https://www.gov.am/am/structure/, 21.05.2025.
9. Hayastani Hanrapetut'yan sahmanadrakan popoxutyunner, https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510, 21.05.2025.
10. Hayastani Hanrapetut'yan Azgayin anvtangut'yan razmavarut'yun (25.02.2007), https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189, 11.04.2025.
11. Hayastani Hanrapetut'yan Azgayin anvtangut'yan nor razmavarut'yun (06.2020), https://www.mfa.am/filemanager/security%20and%20defense/AA-Razmavarutyun-Final.pdf 15.04.2025.
12. Azdararman miasnakan elektronayin hartak, https://azdarar.am/hy/, 24.05.2025.
13. Mariam Margaryani qaxaqakan blogy, https://surl.lu/rkaufi, 11.03.2025.
14. Qaxaqagitut'yun. Usumnakan dzernark.-Yer., 2014.
15. Manukyan A., Zhamanakakic qaxaqakan gortsyntacner., Yer., 2011.